

Առլեն Շահվերդյան ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Arlen Shahverdyan. **RIGHT TO LIVE**
Арлен Шахвердян. **ПРАВО НА ЖИЗНЬ**



«Ապրելու իրավունք» վերնագրով գիրքը նվիրված է առյուծներին՝ վերհանելով այն գաղափարը, որ բոլոր արարածներն ունեն ապրելու իրավունք: Գրքի հարցադրումը վերաբերում է մարդ-բնություն ներդաշնակ հարաբերության անհրաժեշտությանը և մարդ-գիշատիչ, մասնավորապես՝ մարդ-առյուծ, դարավոր հարաբերություններին՝ միմյանց միջև պայքարից մինչև խաղաղ ու ներդաշնակ գոյակցություն: Գրքի նյութը դիտարկվել է լայն սպեկտրով՝ բնապահպանության տեսանկյունից և բնապահպանական անվտանգության համատեքստում:

«Ապրելու իրավունք» գիրքը ոչ միայն առյուծների, նրանց էվոյուցիայի, ենթատեսակային բազմազանության, կենսաբանության, անհետացման ու պահպանության խնդիրների, Աֆրիկայի և Ասիայի վայրի բնության, հանրահայտ բնասերների մասին է, այլև մանրամասն կերպով անդրադառնում է առյուծների դերին աշխարհի բոլոր ազգերի ու պետությունների մշակույթներում, պատմական, կրոնա-դավանաբանական, առասպելագիտական, զինանիշագիտական համակարգերում: Առաջին անգամ մեկտեղվել է հայերեն մեծ տեղեկույթ առյուծների պատկերի օգտագործման ու կրոնական ու հերալդիկ նշանակության վերաբերյալ Հին աշխարհի բոլոր մշակույթներում, այդ թվում՝ Հին Հռոմ ու Հին Հունաստան, Արևելյան ու Արևմտյան Եվրոպա, Աֆրիկա, Հին Եգիպտոս, Միջագետք, Ստորեստան, Բաբելոն, Պարսկաստան, Հարավ-արևելյան Ասիա, Չինաստան, Հնդկաստան, Թայլանդ ու Սինգապուր:

Ծավալուն տեղեկույթ կա առյուծների վերաբերյալ Հայկական լեռնաշխարհում և հայկական մշակույթում: Ավելին. գրքում տեղ են գտել վերջերս Շենգավիթում արված պեղումների, առյուծների գտածոների վերաբերյալ տվյալներ, որոնք տրամադրել են

տվյալ բնագավառում մասնագիտացած գիտնականներ: Գրքում առանձին գլխով մեծ ու հատուկ ուշադրություն է դարձվել հատկապես հայկական զինանիշագիտությանը՝ հայ ժողովրդի կազմավորումից մինչև մեր օրերը:

Գիրքը բացառիկ է նրանով, որ վայրի բնության, խոշոր կատվազգիների և, մասնավորապես՝ առյուծների վերաբերյալ այսպիսի ծավալուն աշխատություն **առաջին անգամ լույս է տեսել հայերեն լեզվով**: Սա շուրջ 10 տարվա հետազոտության արդյունք է և **գիտական ճշգրիտ տեղեկույթի գեղարվեստական ոճով մատուցման ուրույն ու եզակի սինթեզ**, ինչը ավելի հանրամատչելի ու հետաքրքիր է դարձնում գրքի նյութի ընթերցումը բոլոր տարիքի ընթերցողների ու հատկապես՝ երիտասարդների համար:



Գրքի սյուժեն հետևյալն է. Հայաստանից հեռուստատեսային երիտասարդ մասնագետների խումբ է մեկնում Աֆրիկա, իրադարձությունները զարգանում են Սերենգետի ազգային պարկում:

Գրքում օգտագործված է հսկայական մասնագիտական գրականություն (ընդհուպ մինչև 2010–2011 թվականների) և էլեկտրոնային աղբյուրների մի ամբողջ համախումբ: **«Ապրելու իրավունքը», ըստ էության, մի ամբողջ գիտական խմբի աշխատանք է, որն իրականացվել է մեկ հեղինակի կողմից:**

Գրքի առանձնահատկություններից մեկն այն է, որ ներկայացնելով վայրի բնության մի կենդանու՝ նա դիտարկվում է ամբողջ էկոհամակարգի մեջ, որպես դրա անքակտելի մասնիկ: Ավելին. մեկ կենդանու օրինակով հեղինակը գրքում հորդորում է սիրել ու պահպանել հայրենի բնությունը, խնամել այն ու փոխանցել հաջորդ սերունդներին: Բացի կրթադաստիարակչական նշանակությունից, գրքի միջոցով առյուծի քաջարի ու ուժեղ կերպարի ներբերումը ժամանակակից հերալդիկ համակարգ դիտարկվում է որպես ներկա սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության կարևոր ու պատմականորեն հիմնավորված տարր:

«Ապրելու իրավունք» գիրքը ներկայացվել է մասնագիտական լայն շրջանակների: Այն մասնագիտական փորձաքննություն է անցել **Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից** և նրանց բարձր գնահատանքը, գրավոր կարծիքի տեսքով, զետեղված է գրքում:



Գիրքը մասնագիտական բարձր գնահատականի է արժանացել նաև ՀՀ բնապահպանության նախարարության Հայաստանի բնության պետական թանգարանի, ՀՀ Պատմության թանգարանի, ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կողմից, առանձին ողջունումներ կան առյուծների պահպանման ինդիվիդուալ զբաղվող արտասահմանյան մի շարք կազմակերպություններից և անհատներից ևս: Գրքում իրենց օգտակար ներբերումն են ունեցել մեկ տասնյակից ավելի տեղի գիտնականներ, իսկ **ներդիրի բոլոր լուսանկարները, հեղինակային իրավունքի պահպանման նպատակով, օգտագործված են արտասահմանյան հեղինակների (ԱՄՆ, Նիդերլանդներ) բարի թույլտվությամբ: Սա վկայում է, որ հեղինակը գրքի ստեղծմանը մոտեցել է միջազգային հեղինակային իրավունքի բոլոր պահանջների ապահովման տեսանկյունից՝ ձգտելով, որպեսզի «Ապրելու իրավունքը» քննարկման նյութ լինի ոչ թե սոսկ սիրողական, այլ միջազգային ստանդարտներին համապատասխան պրոդուկտի մակարդակում:**

Օտարազգի լուսանկարիչներին և գրքում իրենց մասնակցությունն ունեցած բոլոր անձանց խորին շնորհակալություն է հայտնվում «Երախտիքի խոսք» բաժնում:



Арлен Шахвердян

ПРАВО НА ЖИЗНЬ

Книга «Право на жизнь» посвящена львам – королям всех млекопитающих. Эти могущественные создания вдохновляли автора с детства. Вот он и задумал написать книгу, которая станет «живым монументом» в честь львов. Он проработал над ней почти 10 лет.

В Армении до этого еще не было проведено ни одной исследовательской работы подобного рода. Кроме многих преимуществ, которые имеет книга, самым главным является то, что книга написана на армянском языке. Это уникальный синтез литературы и научного стиля: молодая группа армянских телевизионных специалистов приезжает в национальный парк "Серенгети" и начинает съемки фильма о львах. Во время работ над проектом главный герой – ведущий фильма, встречает молодую девушку, фотографа из Москвы, и они влюбляются. Параллельно этому романтическому сюжету, главный текст о львах основан на точных научных фактах, которые взяты из большого числа авторитетных источников (книги и ссылки отмечены в сносках).

Эта книга о биологии и эволюции львов (также: об эволюции кошачьих, особенно больших кошек), их подвидах; о львах в культуре, в мифологии и религии народов мира (Древний Рим, Древняя Греция, Восточная и Западная Европа, Древний Египет, Вавилон, Ассирия, Юго-Восточная Азия); о львах в геральдике Европы, Востока; про дикую природу Африки и Индии; про национальные парки "Серенгети", "Крюгера" и др.; об африканском сафари; про львов-людоедов, а также про зоопарки мира, Ереванский зоопарк и т.д. Проблемы экологической безопасности мира также взяты на рассмотрение.

В книге отдельная большая часть посвящена древней культуре Армении, львам в геральдике Армении с древних времен до наших дней, а также последним интересным находкам в Армении.

Следует отметить, что в книге есть еще и интересные факты о персидской геральдике и львах. В книге исследованы иранские древние гербы (Лев и Солнце), их структура, история. Также есть части, посвященные индийским или азиатским львам – как подвидам львов, которые находятся под угрозой исчезновения. Одна часть затрагивает историю и предпринятые индийским правительством шаги по сохранению этих львов, а другая часть посвящена индийской мифологии, культуре и дикой природе в контексте исследования львов, их роли в индийской религии, культуре, а также дикой природы. В книге также исследованы «Танец китайского льва» и многие другие интересные факты о «китайских львах» – как одним из символов китайской интересной и удивительной культуры.

Многие специалисты высоко оценили эту книгу. Армянский филиал Всемирного фонда охраны природы письменно дал свою профессиональную оценку в начале книги. Даны также профессиональные оценки местных (армянских государственных организаций и музеев) и иностранных специалистов.

Автор надеется на то, что книга поможет сохранению львов. Чем больше информации люди будут иметь о львах, тем сильнее они полюбят и сохранят их. Автор уверен, что после прочтения этой книги, каждый читатель сможет с уверенностью сказать себе, что теперь он знает гораздо больше о львах. Цель книги – показать связь между людьми и природой, показать как жестоко и одновременно заботливо относятся люди к природе, что каждое животное и растение, каждое создание – это часть экосистемы, часть всей природы. Эта книга отмечает важность охраны природы и ее передачи следующим поколениям, ведь все создания на планете имеют право на жизнь.

В начале книги автор выражает свою благодарность всем тем, кто помог в создании этой книги. Важно отметить, что в знак уважения авторского права всех специалистов, все фотографии в книге использованы только с их разрешения.

Arlen Shahverdyan

RIGHT TO LIVE

The book “Right to live” is dedicated to lions, the kings of all the mammals. These mighty creatures have inspired the author since childhood. So, he thought of writing a book which could be a real “live monument” to lions. He worked on it for about 10 years.

In Armenia there hasn't been done such a research work before. Besides many advantages the book has, the most important one is that it is written in Armenian. It is a unique synthesis of the literature and scientific style: a young group of the Armenian TV specialists arrives to Serengeti National Park and begins to make a film about lions. At the process of working on the project the main hero, the announcer of the film, meets a young girl, photographer from Moscow and they fall in love. In parallel with this romantic story the main text about lions is based on exact scientific facts which are taken from a great number of authoritative sources (the books and links are noted in the footnotes). This is a new kind of presentation of the story in the Armenian scientific literature.

This book is about the biology and evolution of lions (also evolution of the felines, especially the big cats), their subspecies, the lions in the culture, mythology and religion of the world nations (Ancient Rome, Ancient Greece, Western and Eastern Europe, Ancient Egypt, Babylon, Assyria, South-Western Asia), lions in the heraldry of Europe, the East, also African and Indian Wildlife, the Serengeti and Kruger National Parks, African safari, man-eater lions, the world zoos, Yerevan Zoo, etc. The global ecological security issues are also taken into consideration.

There is a big part in the book dedicated to the Armenian ancient culture and the lions in the heraldry of Armenia from the ancient times down to the being time. It is also about the last interesting findings in Armenia.

It's worth mentioning, there are also interesting facts about the Persian amazing heraldry and lions. The Iranian ancient coat of arms (the Lion and the Sun), its structure, history are also studied in the book. There are also other parts dedicated to the Indian or the Asiatic lions as an endangered subspecies of lions. One of the parts is about the Indian lions' history, today's conservation in India, the measures of the Indian government taken on protecting these lions, the other one is about the Indian mythology, Indian culture and wildlife in the context of lions' study, their role in the Indian religion and culture. The "Chinese lion's dance" and many other interesting facts about "Chinese lions" are also examined as one of the symbols of the Chinese interesting and amazing culture.

Many specialists gave their high appraisal to this book. The Armenian branch of the World Wide Fund for Nature (WWF Armenia) also gave its professional high appraisal at the beginning of the book. There are also professional opinions given by the local (the Armenian state organizations and museums) and international specialists.

The author does keep hope that the book will help in protecting lions. The more information people have about lions, the more they will love and protect them. The author is sure, that after having read this book every reader will be able to admit that now he knows much more about lions. The goal of the book is to show the connection between the Human being and the Nature, how cruel sometimes can be a Human being to the Nature and kind at the same time, show that every animal and plant is important, every creature is a part of the ecosystem, a part of all the Nature, human beings as well. The author says through this book that all the creatures have the right to live on the planet. The book also shows the importance of protecting the Nature and leaving it to the next generations.

At the beginning of the book the author shows his gratitude to all those who helped during the creation of this book. It is important to note that respecting the copyright of all the specialists, all the photos in the book are used with their kind permission.